# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 216/19 «18 11 2021թ.

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԾԱՂԿԱՁՈՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲԱԶԱՅՈՒՄ ԱՄԱՆՈՐՅԱ ՈՒՂԵԳՐԵՐԻ ԳՆԵՐԸ և ԱՄՐԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Երևանի պետական համալսարան>> հիմնադրամի /այսուհետ` ԵՊՀ/ կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով.

## Հրամայում եմ

1. ԵՊՀ Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայում 31.12.21թ-06.01.22թ ընկած ժամանակահատվածում ամանորյա ուղեգրերի արժեքը մեկ անձի համար սահմանել.
   ա) մինչև 3 տարեկան երեխաների համար` անվճար
   բ) 3-12 տարեկան երեխաների համար` 40000 (քառասուն հազար) ՀՀ դրամ
   գ) 12 տարին լրացած անձանց համար` 80000 (ութսուն հազար) ՀՀ դրամ
   Ուղեգրերի արժեքի մեջ ներառված են կեցությունը (6 գիշեր), երեք անգամյա սնունդը և ամանորյա հյուրասիրությունը:

2. ԵՊՀ Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայում 31.12.21թ-02.01.22թ ընկած ժամանակահատվածում ամանորյա ուղեգրերի արժեքը մեկ անձի համար սահմանել.
   ա) մինչև 3 տարեկան երեխաների համար` անվճար
   բ) 3-12 տարեկան երեխաների համար` 20000 (քսան հազար) ՀՀ դրամ
   գ) 12 տարին լրացած անձանց համար` 40000 (քառասուն հազար) ՀՀ դրամ
   Ուղեգրերի արժեքի մեջ ներառված են կեցությունը (2 գիշեր), երեք անգամյա սնունդը և ամանորյա հյուրասիրությունը:

3. Սահմանել, որ
   ա) Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայում ուղեգրերի ամրագրումը մեկնարկելու է 2021թ. նոյեմբերի 20-ին և շարունակվելու է մինչև 2021թ-ի դեկտեմբերի 10-ը:
   բ) տեղերի ամրագրման առաջնահերթությունը տրվելու է ավելի վաղ վճարում կատարած ԵՊՀ աշխատակիցներին
   գ) ուղեգրերի արժեքը վճարվում է ԵՊՀ բանկային հաշվեհամարին` Արարատ բանկ h/h 1510001995480500 /AMD/
   դ) հայտերը ներկայացնել ԵՊՀ Կենտրոնական մասնաշենք, 506 սենյակ Սաթենիկ Բաբայանին (հեռ.` 11-05, 060 710 105, 094 19 80 10)
   ե) ուղեգրերի արժեքը վճարած անձանց համար բազայում սենյակների նախնական ամրագրումն իրականացնում է ԵՊՀ ռեկտորի աշխատակազմի ղեկավար Դ. Հովհաննիսյանը:

4. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ աշխատակիցներին:

ԵՊՀ ռեկտորի ժ/պ Հ.Վ.Հովհաննիսյան